

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ԵՎ ՎԱՂԱԿԱՏԱՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանասիր. գիտ. թեկնածու Շ. Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայերենի բայական համակարգում վաղակատար և անցյալ կատարյալ ժամանակաձևերի գործառական-իմաստային սահմանագատումը հայագիտության ուշագրավ խնդիրներից է¹: Հայերենի ավանդական քերականագիտության մեջ վաղակատար և անցյալ կատարյալ բայաձևերի իմաստային սահմանագատումը սովորաբար կատարվում է ժամանակային, մասամբ նաև կերպային առումով: Ըստ Ս. Աբրահամյանի՝ «Անցյալ կատարյալը ժամանակային իմաստով մոտ է վաղակատար ժամանակին. դրանց միջև կա ժամանակային, մասամբ նաև կերպային հակադրություն»²: Լեզվական, քերականական ժամանակը կարծես նյութականացնում է հավերժ ժամանակի տվյալ հատվածը: Իմացաբանական ժամանակը մեկընդմիջտ նույնն է. քերականական ժամանակի պատկերները լոկ «ցատկոտում են» նրա շուրջը՝ մարմնավորելով նրա որևէ հատվածը որոշակի համատեքստում³: Խոսքային շղթայում միշտ չէ, որ կերպի իմաստները լիովին համընկնում են իրենց ձևերին: Կերպը խոսքային շղթայում դիտարկվում է որպես բայ-ստորոգյալի արտահայտություն. արտահայտվում է նաև լրացուցիչ բառական միջոցներով, շարահյուսական այն կապերով, որ տվյալ նախադասությունը կապվում է նախորդող և հաջորդող նախադասությունների հետ: Վաղակատար և անցյալ կատարյալ բայաձևերում կերպային դրսևորումները միշտ չէ, որ հակադրվում են միմյանց, հաճախ նույնանում են և դառնում դժվար սահմանագատելի հատկապես տարբեր լեզուներով թարգմանության ժամանակ: Ըստ Ս. Աբրահամյանի՝ անցյալ կատարյալը նշում է գործողության կատարված, ավարտված լինելը խոսելու պահից անմիջապես առաջ: Անցյալ կատարյալի ու վաղակատարի միջև կա ժամանակային հաջոր-

¹ Տե՛ս [http://raber.asj-oa.am/2852/1/1980-9\(49\).pdf](http://raber.asj-oa.am/2852/1/1980-9(49).pdf)

² Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի դերբայների և ժամանակների մասին // «Լրաբեր հասարակական գիտություններ», 1969, 10 (317), էջ 24:

³ Տե՛ս Ա. Տոնոյան, Սահմանական եղանակի անցյալի ժամանակային համակարգի պրագմատիկ-համադրական ուսումնասիրությունը գերմաներենում և հայերենում, Ե., 1989, էջ 66:

դականություն, այսինքն՝ քերականական ժամանակի տարբերություն: Ըստ Մ. Աբեղյանի՝ անցյալ կատարյալի արտահայտած գործողությունը կապվում է գործողության և ականատես լինելու կամ նրա կատարման իրադրության մեջ լինելու հետ (խոսողն ականատես է կամ մտածում է իրեն որպես այդպիսին), անցյալ կատարյալ բայաձևի գործառական իմաստային այս առանձնահատկությունը վկայում է, որ գործողությունը կատարվել է խոսելու պահին մոտ ժամանակում: Վաղակատար տարբերակը ցույց է տալիս գործողություն, որի մասին խոսողը դատողություններ է անում որպես դիտող՝ ի տարբերություն անցյալ կատարյալի, որն արտահայտում է այնպիսի գործողություն, որ խոսողը ինքն է տեսել: Նշվում են նաև այդ ձևերի կապակցելիության յուրահատկությունները ժամանակային տարբեր իմաստ ունեցող բառերի և բառակապակցությունների հետ: Խոսելու պահին անմիջապես նախորդող կամ համեմատաբար մոտ ժամանակ ցույց տվող բառերն ու բառակապակցությունները (*հենց նոր, այս պահին, այս րոպեին, հանկարծ, մեկ էլ, կրկին, իսկույն*) գործածվում են անցյալ կատարյալի հետ, մինչդեռ ավելի վաղ ժամանակ ցույց տվող բառերն ու բառակապակցությունները (*վաղուց, շատ առաջ, արդեն, ժամանակին, դեռ*)՝ վաղակատարի հետ⁴:

Գործողությունը կարճ է տևում. դրանով անցյալ կատարյալը հակադրվում է մյուս ժամանակաձևերին կերպային առումով: Անցյալ կատարյալը կարող է մի ակնթարթում ավարտված գործողություն ազդանշել, մինչդեռ վաղակատարը կարող է ազդանշել ավարտված, սակայն ընդհանուր առմամբ կրկնվող գործողություն: Անցյալ կատարյալը և վաղակատարը հոմանիշներ են: Երկուսն էլ ցույց են տալիս ավարտված գործողություն անցյալում: Նրանք փոխարինվում են միմյանցով, միննույն ժամանակ տարբերվում են միմյանցից մի շարք հատկանիշներով: Որոշ բայեր վաղակատար ժամանակով ցույց են տալիս մինչև խոսելու պահը տևող գործողություն: «Անցյալ կատարյալ ժամանակը կարող է ինչպես մոտ անցյալում, այնպես էլ հեռու անցյալում ավարտված գործողություն ազդանշել: Այդ իմաստների իրականացման համար կարևոր նշանակություն ունեն ժամանականիշ մակբայական ցուցիչները. հմմտ.

⁴ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 557—564:

*մեկ ժամ առաջ մեկնեց, տարիներ առաջ մեկնեց»*⁵: Անցյալ կատարյալի դեպքում գործողության պահը և տեսողական պահը համընկնում են և ընկած են խոսելու պահից առաջ, եթե անցյալ կատարյալն առկայացնում է իր հիմնական քերականական իմաստը (անցյալ ժամանակում ավարտված գործողություն), և ոչ թե համատեքստային այլ իմաստներ, որոնց ժամանակային կառույցը և իմաստը տարբերվում են⁶: «Քերականական ժամանակը իմացաբանական ժամանակի արտացոլման եղանակներից մեկն է լեզվում»⁷: Վաղակատարով կազմվող ձևերը սովորաբար հանդես են գալիս պատմողական բնույթի նախադասություններում՝ ի տարբերություն անցյալ կատարյալի ձևերի: Այլ կերպ ասած՝ վաղակատարը ապահովում է պատմական շղթան, մինչդեռ անցյալ կատարյալը ավելի գործնական իրադրական վիճակներ է ներկայացնում: Վաղակատարով արտահայտված գործողություններն ունեն սահմանային եզր: Եզրի այս դրսևորումը պայմանավորված է բառական լրացուցիչ միջոցներով՝ *ժամը հինգին, ժամը յոթին*:

Անցյալ կատարյալի և վաղակատարի ժամանակային հակադրությունը երևում է հարացուցային մակարդակում, ինչպես և դրան հաջորդող խոսքային միջավայրում: *Քայլել է և քայլեց* ձևերի հակադրության մեջ *քայլեց*-ը նշում է գործողության կատարված, ավարտված լինելը խոսելու պահից անմիջապես առաջ: Ունենք ժամանակային հաջորդականություն, հետևապես և քերականական ժամանակի տարբերություն: «Ժամանակակից լեզվաբանությունը իմացաբանության տեսակետից բայի արտահայտած իմաստը սահմանում է որպես առարկայի փոփոխվող հատկանիշ ժամանակի մեջ: ... Մարդկային մտածողությունը ժամանակի հավերժ ընթացքը ճանաչելու նպատակով տարրորոշում է ժամանակը առանձին հատույթների կամ հատվածների: Լեզվի մեջ դրանք իրենց արտահայտությունն են գտնում բառերով, բառակապակցություններով և նախադասություններով: Դրանց փոխհարաբերությունների բնորոշ տեսանկյունը դրսևորվում է հաջորդականության շարքով, և յուրաքանչյուր հատույթ այդ շարքում ունի իր նախորդն ու հաջորդողը:

⁵ Ա. Տոնոյան, նշվ. աշխ., էջ 66:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 69:

⁷ Ա. Աբաջյան, Անցյալ կատարյալ ժամանակը հայերենում, Ե., 2015, էջ 7:

Սրանով պայմանավորված՝ գոյանում են ժամանակային պլաններ»⁸:

Անցյալ կատարյալի և վաղակատարի իմաստային տարբերության մասին է խոսում ժամանակային տարբեր իմաստներ ունեցող բառերի և կապակցությունների կապակցելիության յուրահատկությունը: Խոսելու պահին անմիջապես նախորդող բառերը՝ *հենց նոր, այս պահին, այս րոպեին*, գործածվում են անցյալ կատարյալի հետ, իսկ ավելի վաղ ժամանակ ցույց տվող բառակապակցությունները՝ *վաղուց, շատ առաջ, առաջ*՝ վաղակատար ժամանակի հետ⁹: Անցյալ կատարյալի իմաստային մյուս յուրահատկությունը նրա ցույց տված գործողության կարճ տևականությունն է: «Վաղակատար ժամանակը կարող է ցույց տալ ոչ միայն անցյալում ավարտված, վերջացած գործողություն, այլև կատարված վերջացած, բայց և մինչև խոսքի պահը տևող գործողություն, վիճակ. այդ արտահայտում են հատկապես պրոցես, վիճակ, դրություն ցույց տվող բայերի վաղակատար ժամանակաձևերը»¹⁰:

Սահմանական եղանակի ներկայի իմաստ ունի վաղակատարը ժողովրդական ասացվածքներում, իմաստություններում, ճշմարտություններում, որոնք հաստատված են ժողովրդի կենսափորձով. *Անճարը կերել ա բանջարը: Տերը տվել է, տերտերը տարել*¹¹:

Մի շարք լեզուների ժամանակային ձևերը իմաստային բարդ կառուցվածք ունեն. դա ստիպել է լեզվաբաններին դիմել կերպի կարգին՝ նշելու համար այն ամենը, ինչ ժամանակային ձևերում ժամանակային չէ: Այս իսկ պատճառով կերպի բնորոշումը դարձել է անորոշ: Յուրաքանչյուր լեզվի, յուրաքանչյուր հակադրության ուսումնասիրության դեպքում այդ տերմինն ավելի կոնկրետ նշանակություն է ձեռք բերում: «Կերպային հատկանիշը սովորաբար ուղեկցվում է ժամանակային, երբեմն էլ ավելի մասնավոր բնույթ ունեցող իմաստային հատկանիշներով, որոնց ամբողջությունն էլ հենց կազմում է տվյալ կերպածամանակային ձևի անփոփոխակ արժեքը: Հայերենի կերպածամանակային ձևերն ունեն իմաստային

⁸ Յու. Գաբրիելյան, Գերմաներեն լեզվի տիպաբանություն, Ե., 2006, էջ 55:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Տե՛ս Պ. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Ե., 1959, էջ 79:

¹¹ Նույն տեղում, էջ 85-86:

բարդ կառուցվածք, որը կարելի է բնորոշել ձևերի հակադրության ժամանակ բացահայտվող բովանդակության պլանի տարբերակիչ հատկանիշներով, որոնք կարող են որպես ելակետ ծառայել բառաձևերի համադրական ուսումնասիրության համար»¹²:

Հաշվարկման կետի հետ կապն է ընկած *վաղակատար ներկա-անցյալ կատարյալ* հակադրության հիմքում: Հայերենի տվյալ հակադրության մեջ անցյալ կատարյալը չի արտահայտում խոսքի պահի հետ կապի՝ բացակայության հատկանիշը, այլ բնորոշվում է այդ հատկանիշի հանդեպ իր ունեցած չեզոք վերաբերմունքով: Սրանով է, որ կարելի է բացատրել անցյալ կատարյալի օգտագործման հնարավորությունները թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում: Դրա հետ է կապված նաև այդ ձևի համատեղելիությունը ներկայի հետ կապ արտահայտող պարագաների հետ: Վաղակատարը արտահայտում է կապ ներկայի հետ, որով պայմանավորված է գործողության հետևանքայնության լրացուցիչ հատկանիշը: Վաղակատարի՝ ներկայի հետ կապի հատկանիշը կարող է չեզոքանալ փոխարինվելով ոչ ականատեսության հատկանիշով: Նման դեպքերում ոչ այնքան կարևոր են անմիջապես ոչ ականատեսություն արտահայտող, որքան ներկայի հետ կապի հատկանիշի չեզոքացումն ապահովող համատեքստային պայմանները (մի օր, մի անգամ, այդ օրը): *Անցյալ կատարյալ-վաղակատար* հակադրությունը կարելի է բնորոշել նաև որպես հակադրություն *ըստ գործողության որոշակիության/անորոշության*, որը իրականանում է որպես գործողության կատարման հավաստիության հանդեպ խոսողի վերաբերմունքի որոշակիության/անորոշության հակադրություն: Անցյալ կատարյալով արտահայտված որոշակիությունը և վաղակատարով արտահայտված անորոշությունը հստակորեն բացահայտվում են համատեքստից անկախ գործածություններում: Որոշակիությունն է, որ *քայլեց* ձևին հաղորդում է *քայլել* է ձևի համեմատությամբ խոսքի պահին ավելի մոտ գործողության իմաստ: Մյուս կողմից վաղակատարով արտահայտված անորոշությունն է, որ նրան ոչ ականատեսության հատկանիշի հնարավորություն է տալիս¹³:

¹² Ա. Մուրադյան, Ֆրանսերենի և հայերենի ձևաբանական համակարգերի գուգադրական ուսումնասիրություն, Ե., 1986, էջ 78-79:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 90:

Ա. Սմիռնիցկին կարծում է, որ վաղակատար և ոչ վաղակատար ձևերի հակադրամիասնությամբ դրսևորվում է ոչ թե կերպիկամ էլ ժամանակի, այլ ժամանակային վերաբերության կամ ժամանակային հարաբերակցության կարգը, որտեղ հակադրության նշույթավորված եզրը ներկայացնում են վաղակատարի ձևերը: Ի տարբերություն ժամանակի քերականական կարգի, որը ցույց է տալիս եղելության (գործողության) հարաբերությունը այս կամ այն որոշակի (կոնկրետ) ժամանակի կտրվածքի նկատմամբ, ժամանակային հարաբերակցության կարգը ցույց է տալիս եղելության հարաբերակցությունը ժամանակի նկատմամբ ընդհանրապես: Հակադրության վաղակատարի եզրն արտահայտում է նախորդայնությունն որևէ ժամանակի կտրվածքի (ներկա, անցյալ, ապառնի) կամ մեկ այլ գործողության կատարման պահի նկատմամբ: Փաստորեն հաջորդականության կարգը նույն ժամանակային հարաբերակցությունն է. երկու դեպքում էլ դերբայների միջոցով արտահայտվող ոչ իրադրական ժամանակը, օժանդակ բայի ձևերի գուգորդությամբ հարաբերվելով որևէ ժամանակակետի հետ, որոշակիանում, դրսևորվում է որպես իրադրական ժամանակ¹⁴:

Ըստ Հ. Ասմանգուլյանի՝ վաղակատարի հակադրությունը հայերենի մյուս կերպաժամանակային ձևերին, մասնավորապես անցյալի բայաձևերին, կազմում է բայի հատուկ քերականական կարգ, որը հատուկ ընդհանրություններ ունի անգլերենի ժամանակային վերաբերության կարգի հետ¹⁵: Հաջորդականության շղթա են կազմում ոչ միայն անցյալի կամ ապառնիի ոլորտների առանձին ժամանակաձևերը. հաջորդականության շղթայում են գտնվում նաև ժամանակի քերականական կարգի հիմնական ներկա, անցյալ, ապառնի քերականույթները: Ժամանակային հակադրությունները արտահայտվում են միմիայն հաջորդականությամբ հաշվարկման կետի նկատմամբ համընթացության, նախորդման, հաջորդման եզրերի ամբողջությամբ¹⁶:

Ա. Բախշյանը, կատարելով հոգելեզվաբանական վերլուծություն, անցյալ կատարյալ-վաղակատար ներկա կերպային հարաբերությունը ներկայացնում է հետևյալ երկանդամ հակադրություն-

¹⁴ Տե՛ս http://ysu.am/files/03S_Avetyan.pdf

¹⁵ Տե՛ս [http://lraber.asj-oa.am/2852/1/1980-9\(49\).pdf](http://lraber.asj-oa.am/2852/1/1980-9(49).pdf)

¹⁶ Տե՛ս [http://lraber.asj-oa.am/4489/1/1982-10\(31\).pdf](http://lraber.asj-oa.am/4489/1/1982-10(31).pdf)

ների տեսքով՝ անցյալ կատարյալ (անմիջականություն, մասնակցություն, ներառում և այլն) և վաղակատար (միջնորդավորվածություն, ոչ մասնակցություն, բացառում և այլն):

Ա. Բախշյանը նշում է, որ կան բուն հայերենին, հայկական հաղորդակցական միջավայրին բնորոշ լեզվական տարրեր, այսինքն՝ այստեղ խնդիրը ոչ միայն լեզվական է, այլև լեզվաաշխարհագրական¹⁷:

Ի մի բերելով համատեքստում գործառվող անցյալ կատարյալի և վաղակատարի իմաստային հակադրությունները, որոնք հատկապես կարևորվում են ճշգրիտ թարգմանությունների ժամանակ, անցյալ կատարյալում կարող ենք առանձնացնել հետևյալ իմաստային նրբերանգները՝ անմիջականություն, մասնակցություն, ներառում, սկսման եզրայնություն, հավաստիություն, որոշյալություն, ականատեսություն, կոնկրետություն, նախորդում խոսքի պահին, ոչ տևականություն, իսկ վաղակատարում՝ համապատասխանաբար հետևյալ իմաստային նրբերանգները՝ միջնորդավորվածություն, ոչ մասնակցություն, բացառում, սկսման ոչ եզրայնություն, թեականություն, անորոշություն, ոչ ականատեսություն, վերացականություն, նախորդում ներկայի կամ անցյալի որևէ պահի, տևականություն:

Ш.С. Геворкян. Смысловые различия между прошедшим и прошедшим совершенным временами в современном армянском языке. Функционально-смысловое ограничение временных форм прошедшего и прошедшего совершенного в армянской глагольной системе является одним из важных проблем арменоведения. Связь с пунктом расчета- это свойство лежит в основе противоположности упомянутых времен. В этой противоположности прошедшее совершенное не отображает свойство отсутствия связи с моментом речи, а характеризуется нейтральным отношением к данному свойству. Край противоположности прошедшего проявляет предшествование по отношению к другому времени.

Sh. S. Gevorgyan. Semantic differences between Past Simple and Perfect Tenses in Modern Armenian. The formation of functional and semantic boundaries of perfect and past tense is one of the most important issues in Armenian verbal system. This feature is the bases of present perfect and past perfect contrast. In contrast the past perfect isn't expressing the feature of the absence of connection with speech time, instead it's characterized with the neutral attitude towards that feature. The perfect edge of contrast is expressing the previousness towards any tense.

¹⁷ Տե՛ս Ա. Բախշյան, Կերպը համատեքստում // «Գիտական նյութերի ժողովածու, Վանաձոր», Ե., 2001, էջ 11: